ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. դեկտեմբերի 16 **N 163-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՋԱՄՇԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՐԱԶՄ ՈՒՌՈՒՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ջամշլու համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 280.7 հա արոտավայրերը փաստացի օգտագործվում են համայնքի բնակիչների կողմից առանց վարձակալության պայմանագրեր կնքելու և որոնց համար վարձավճարներ չեն գանձվում:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և 56^{1}-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Ջամշլու համայնքի ղեկավար Միրազմ Ուռուսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **հարյուր հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Ջամշլու համայնքի ղեկավար Միրազմ Ուռուսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջամշլու համայնքի ղեկավար Միրազմ Ուռուսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ